Հայաստանի Հանրապետության ներքին գործերի
նախարարության իրավաբանական վարչության
դատական պաշտպանության բաժնի պետ
Ն.Շանոյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի մարտի 5-ից մինչև 2026 թվականի մայիսի 20-ը ընկած ժամանակահատվածում իմ՝ ներքին գործերի նախարարության իրավաբանական վարչության դատական պաշտպանության բաժնի փորձագետ Գուրգեն Ղազարյանիս կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ՝

1. Բաժնի իրավասության սահմաններում ՀՀ վարչական դատարանում 2 վարչական գործերով, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում 3 վարչական գործերով ներկայացրել եմ նախարարության շահերը:

2. Նախարարության անունից 4 վարչական գործերով հանդես եմ եկել որպես հայցվորի 1 վարչական գործով պատասխանողի ներկայացուցիչ:

3. 3 վարչական գործով հայց եմ ներկայացրել վարչական դատարան, 1 վարչական գործով ներկայացրել եմ վերաքննիչ բողոք:

4. դատական ներկայացուցչության շրջանակներում տրամադրել եմ իրավական խորհրդատվություն ներքին գործերի նախարարության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Քանաքեռ-Զեյթունի բաժնի աշխատակիցներին:

Հարգանքով՝

Հայաստանի Հանրապետության Ներքին
գործերի նախարարության իրավաբանական վարչության
դատական պաշտպանության բաժնի փորձագետ՝ **Գուրգեն Ղազարյան**

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները

Գնահատում եմ

Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի
նախարարության իրավաբանական վարչության
դատական պաշտպանության բաժնի պետ՝ **Նունե Շանոյան**

20.05.2026թ.